




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Yucca brevifolia

16 - 1932

351.74

> -16

351.74
2-16

1 MAR 2010

Պատկերներ բոլոր յերկրների, միացե՛ք:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՒ ՅԵՎ
ՆՐԱՆՑ ԽԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Հ. Ս. Խ. Հ. ԲԻ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
(Հարց ու պատասխանով)

Կազմեց Գ. ՀԱՆՈՒՄՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. Խ. Հ. ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉԱԽՅԱՆ

Պետերատի տպարան
Դավիթ 7652 (բ)
Պատվեր № 2020
Տիբաթ 1500

Սրբագրեց՝ Գ. Հակոբյան

357.74
2-16


48

Ստեղծագործական աշխատանքի հաջողությունն, մանավանդ սոցիալիստական շինարարության ներկա շրջանում, կախված է գլխավորապես հեղափոխական կարգի ու հասարակական ազահովության գրությունից:

Յերկրի հասարակական կյանքի կանոնավորող ազդակներից մեկն են համարվում խորհրդային իշխանության կենտրոնական ու տեղական մարմինների կողմից հրատարակվող պարտադիր վորոշումները, վորոնց կիրառման վրա հսկելու պարտականությունները վերապահված են Բանվորա-գյուղական Միլիցիային:

Անշուշտ, այդպիսի լուրջ և պատասխանատու պարտականությունն հաջող կատարելու համար կարևոր է, վոր միլիցիայի աշխատակիցներն իրենց պարզ կացուցանեն հրատարակվող պարտադիր վորոշումների նշանակությունը, նրանց դասակարգային գրութի և նրանց խախտողների դեմ պայքարելու սկզբունքները:

Այդ հանգամանքի կապակցությամբ Միլիցիայի մարմիններին առաջ ծառանում են մի շարք ելական բնույթի պահանջներ, այն է. իր ժամանակին միջնորդել պատշաճ մարմինների առաջ՝ դործող պարտադիր վորոշումները վերանայելու մասին, ներկայացնել հեղափոխական կարգի ու հասարակական անվտանգության պահպանման հարցերի վերաբերյալ պարտադիր վորոշումների նախագծեր, ձեռնարկել վարչական մի-



29 MAY 2013

ընդներ, համաձայն սահմանված կանոնների և այդ միջոցների սուր ծայրը հիմնականում ուղղել կուլակային և այլ անաշխատ ու անհարգատ տարրերի դեմ և այլն և այլն:

Ներկա դեպքում անհրաժեշտ է թվում մանրամասնորեն ուսումնասիրել և հիմնովին յուրացնել ՀՍԽՀ կենտգործկոմի ու Ժողկոմխորհի այն որենսդրական ակտը, վոր կոչվում է «Կանոնադրություն պարտադիր վորոշումներ հրատարակելու և նրանց խախտման համար վարչական միջոցներ նշանակելու մասին»: Ուստի ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչությունը նպատակահարմար գտավ առաջադրել իր տեղական մարմիններին հիշյալ որենքը հարց ու պատասխանի ձևով:

Առաջարկված այս ձեռնարկը չի շեղվում «Կանոնադրության» բնադրից և իր այդ ձևով ու բովանդակությամբ միանգամայն մատչելի չե դառնում մեր միլիցիայի աշխատակիցներին համար:

ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի Գլխավոր

Վարչության պետ՝ Ա. ԴՈՒԼԳԱՐՅԱՆ

7 հունիսի 1932 թ.:

Յերեան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՒ ՅԵՎ
ՆՐԱՆՑ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե Ն. Ս. Խ. Զ. ԿԵՆՏԳՈՐԾԿՈՍԻ ՅԵՎ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ
ԿՈՂՄԻՑ 1931 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 26-ԻՆ

Բացառությամբ հարց ու պատասխանով

Հ Ա Տ Վ Ա Ծ Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Ո՞վ իրավունք ունի պարտադիր վորոշումներ
հրատարակելու

— Պարտադիր վորոշումներ հրատարակելու իրավունք ունեն Ժողովրդական կոմիտարիատներն ու նրանց հավասարեցված կենտրոնական հիմնարկները (Հայջըրտնտեսությունը, Կոլխոզկենտրոնը և այլն), չրջանային գործադիր կոմիտեները, քաղաքային, ավանային և գյուղական խորհուրդները:

2. Ի՞նչ նպատակով են հրատարակվում պարտադիր
վորոշումները

— Պարտադիր վորոշումներն նպատակն են սահմանել ամբողջ բնակչության կամ նրա առանձին խմբերի, նաև հիմնարկների, ձեռնարկությունների ու կազմակերպությունների համար այս կամ այն պարտականու-

թյունները և այդ պարտականությունները չկատարելու կամ խախտելու դեպքում՝ պատասխանատվություն վարչական կարգով, իսկ որենքով նախատեսված հանգամանքներում՝ դատական կամ կարգապահական կարգով:

3. Ի՞նչ հարցերի վերաբերյալ պարտդիր վորոշումներ կարող են հրատարակվել

Ա. Ժողովրդական Կոմիտեի անդամներն ու սրանց հավասարեցված կենտրոնական հիմնարկներն իրավունք ունեն հրատարակել պարտադիր վորոշումներ այն բոլոր հարցերի նկատմամբ, վորոնք այդ հիմնարկների մասին գործող կանոնադրություններով վերապահված են իրենց իրավասությանը:

Բ. Շրջանային գործադիր Կոմիտեները, քաղաքային ու ավանային խորհուրդներն իրավունք ունեն հրատարակել պարտադիր վորոշումներ հետևյալ հարցերի վերաբերմամբ.

ա) հեղափոխական կարգն ու անդորրությունը պահպանելու.

բ) պետկան ու հասարակական գույքը պահպանելու.

գ) բնակչության առողջությունը պահպանելու և վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու.

դ) հասարակական ոգտագործման ձեռնարկությունների (ճաշարաններ, բեստորաններ, թեյարաններ, պանդոկներ, հյուրանոցներ, գլխերթի տներ, բաղնիքներ, լողարաններ, վարսավիրանոցներ և այլն), բնակարանների, բակերի, փողոցների, իսկ քաղաքային բնակավայրերում տների մուտքի ու սանդուխքի լուսա-

վորման, տների ճակատին համարներ փակցնելու, նկուղային շենքերը չորացնելու.

ե) շենքերի կամ նրանց առանձին մասերի վերանորոգման, վերակառուցման կամ փլուվների վտանգին յենթակա մասերը քանդելու.

զ) փողոցների, մայթերի, ջրմուղու ցանցի ու ջրատար խողովակների նորոգության ու պահպանության, նաև քաղաքային և գույշական վայրերում ջրամբարների պահպանության.

է) կոուրների ձյունը մաքրելու.

ը) առևտուր անելու ժամանակն ու կարգը, նաև տոնավաճառներում, շուկաներում, բազարներում և առևտրի այլ վայրերում կարգ ու կանոն սահմանելու.

թ) կառքերի ու տեղական տրանսպորտի այլ միջոցների փոխադրության սակագին սահմանելու.

ժ) որենքով նախատեսված սահմաններում ճանապարհների շինարարությունը:

ի) ավտո-մոտո, խճուղային և սայլի, նաև ինդհանուր ոգտադործման ճանապարհներով շարժման կարգը ու անվտանգությունը պահպանելու.

լ) թատրոնների, կինոների, ակումբների, խաղարանների և այլ նման ձեռնարկությունների բազմաթիվ կարգի ու գործունեյության:

խ) հակահրդեհային ձեռնարկումներ իրականացնելու.

ծ) տարերային աղետների դեմ պայքարելու.

կ) անասունների համաճարակների ու զանազան վնասատուների դեմ պայքարելու.

հ) անտառները, տնկարանները, մարդադետիններն ու ցանքերը հափշտակումներից, վոջնչացումից, փչացումից և ագածելուց պահպանելու.

ձ) անցնող դորքերին բնակարաններ հատկացնելու .
Գ. դյուշական խորհուրդներն իրավունք ունեն հրատա-
րակել պարտադիր վորոշումներ, հետևյալ հարցերի մա-
սին .

ա) գյուղի սանիտարական դրուժյան .

բ) հակահրդեհային ձեռնարկումներ իրականացնե-
լու .

գ) ամրան ամիսներին արածող անասունների տե-
ղափոխության .

դ) տերերին պարտավորեցնել շներին կապած պա-
հելու :

4. Կարելի՞ չէ արդյո՞ք հրատարակել պարտադիր
վորոշումներ վերև հիշատակված և այս «կանոնադրու-
թյամբ» նախատեսված հարցերից դուրս

Պարտադիր վորոշումներ հրատարակելու իրա-
վունքն այն հարցերի վերաբերմամբ, վորոնք չեն նա-
խատեսված սույն «կանոնադրությամբ», տրվում է
ամեն անգամ հատուկ որոշումով :

5. Ո՞ւմ վրա չի տարածվում պարտադիր վորո-
շումների ներգործությունը

Պարտադիր վորոշումների ներգործությունը տա-
րածվում է թե՛ մասնավոր անձերի և թե՛ պետական
հիմնարկների, ձեռնարկությունների ու հասարակա-
կան կազմակերպությունների վրա :

6. Ի՞նչպես են հրատարակվում պարտադիր վորո-
շումները

Պարտադիր վորոշումները հրատարակվում են սույն
«կանոնադրությամբ սահմանած կարգով, վորի մասին
բացատրություններ են բերվում ստորև :

7. Ի՞նչ հիմնական սկզբունքով պետք է դեկլարվել
պարտադիր վորոշումներ հրատարակելիս :

Պարտադիր վորոշման յուրաքանչյուր նախադիմ
մշակվում է շահագրգռված մարմինների անմիջական
մասնակցությամբ :

Ժողովրդական կոմիտեների ու նրանց հավա-
սարեցված կենտրոնական հիմնարկների պարտադիր
վորոշումները հակասելու չեն ՀՍԽՀ սահմաններում
գործող որենքներին, իսկ իշխանության տեղական մար-
մինների պարտադիր վորոշումները, բացի այդ, չպետք
է հակասեն նաև ժողովրդական կոմիտեների ու
նրանց հավասարեցված կենտրոնական հիմնարկների և
իշխանության վերադաս մարմինների վորոշումներին,
հրահանգներին ու այլ ակտերին, կամ չպետք է կրկնեն
հիշյալ ակտերի բովանդակությունը :

Այն մարմինները, վորոնք իրավագոր են պարտա-
դիր վորոշումներ հրատարակելու, չեն կարող իրենց
այդ իրավունքը լիազորել կամ հանձնարարել այլ հիմ-
նարկներին, նույնիսկ իրենց յենթակա հիմնարկներին :

8. Ի՞նչ է պարունակելու պարտադիր վորոշումն
ըստ յուր արտաքին ձևի

Յուրաքանչյուր պարտադիր վորոշման մեջ ըստ
արտաքին ձևի պետք է մատնանշված լինեն .

ա) «պարտադիր վորոշում» անունը .

բ) պարտադիր վորոշում հրատարակող հիմնար-
կի անունը .

գ) հրատարակության տարեթիվն ու ամսաթիվը .

դ) պարտադիր վորոշման հաջորդական համարա-
կալության թվահամարը .

ե) պարտադիր վորոշման ներգործության ժամա-
նակամիջոցը .

զ) վո՞ր ժամկետից սկսած ուժի մեջ է մտնում
պարտադիր վորոշումը :

է) պարտադիր վորոշման ներդրութեան տերիտորիան.

ը) այն անձերը, հիմնարկները, ձեռնարկութեանները, կազմակերպութեանները, վորոնց վրա տարածվում է պարտադիր վորոշման ներդրութեանը.

թ) պարտադիր վորոշումով դրված բոլոր պարտականութեանները մի առ մի հիշատակումը.

ժ) այն պատասխանատվութեանը, վորին յենթարկվում է պարտադիր վորոշումը չկատարողը կամ խախտողը.

ի) իշխանութեան այն մարմինները, վորոնք հրամայում են պարտադիր վորոշման անթերի կիրառմանը.

լ) վարչական ներդրութեան միջոցները կիրառելու վորոշման դեմ բողոքելու կարգն ու պայմանաժամը.

կ) շրջանային գործադիր կոմիտեյի, քաղաքային, ավանային և գյուղական խորհրդի այն նիստի արձանագրութեան տարեթիվն, ամսաթիվն ու թվահամարը, վորով ընդունված է պարտադիր վորոշումը:

ծ) պարտադիր վորոշումը հրատարակող հիմնարկի պետի ու քարտուղարի ստորագրութեանները:

9. Ներգործութեան վորժիմ ժամանակամիջոց կարող է ունենալ պարտադիր վորոշում

Պարտադիր վորոշումը կարող է հրատարակվել մեկ տարուց վոչ ավելի ժամանակով:

Մեկ տարուց պակաս ժամանակով հրատարակված պարտադիր վորոշման ներդրութեանը կարող է յերկարաձգվել մինչև մեկ տարի ժամանակով, առանց նորից հրատարակելու, միայն հայտարարելով բնակչութեանն այդ պարտադիր վորոշման ներդրութեան ժամանակամիջոցն յերկարացնելու մասին:

10. Ո՞ւմ և ի՞նչ դեպքում իրավունք է վերապահված հրատարակել պարտադիր վորոշումներ մեկ տարուց ավելի ժամանակով

Ժողովրդական կոմիսարիատներն ու նրանց հավանորենցված կենտրոնական հիմնարկները, բացառութեան կազմելով, իրավունք ունեն հրատարակել պարտադիր վորոշումներ, առանց սահմանափակելու նրանց ներդրութեան ժամանակամիջոցը:

Պարտադիր վորոշումներ հրատարակելու իրավունք ունեցող մյուս հիմնարկները կարող են հրատարակել պարտադիր վորոշում մեկ տարուց ավելի ժամանակով միայն այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են՝ հեղափոխական կարգը, հասարակապետական գործութեանն ու ապահովութեանը, տվյալ վայրի բարեկարգութեանը, բնակարանային գործը, ժողովրդական առողջութեան պահպանութեանը, փողոցների ու ճանապարհների յերթեկելութեան կարգավորումը: Այս դեպքում պարտադիր վորոշման մեջ նշվում է, վոր այն հրատարակվում է մինչև վերացնելը: Յեթե պարտադիր վորոշման մեջ մատնանշված չեն նրա ներդրութեան ժամանակամիջոցը, ապա այն համարվում է մեկ տարի ժամանակով հրատարակված:

11. Ինչպե՞ս վարվել, յերբ անհրաժեշտ է զգացվում մնացյալ հարցերի վերաբերմամբ ավելի յերկար ժամանակով պարտադիր վորոշում հրատարակել

Այսպիսի դեպքերում շրջգործկոմները, քաղաքային, ավանային և գյուղական խորհրդները նախորդ քննութեան են առնում այն հարցը, վոր գործող պարտադիր վորոշումը վերահրատարակվի յուր ժամկետն անցնելուց հետո և ապա նորից այդ հրապարակում են ընդհանուր հիմունքներով:

12. Ի՞նչպես են հրատարակվում պարտադիր վո-
բոշումներն ի գիտություն բոլորի

Պարտադիր վորոշումները հրատարակվում են ի
գիտություն բոլորի, հրապարակելով պաշտոնական
թերթում (լրագրում), իսկ վորտեղ աղբյուրին չկա,
փակցնելով աչքի ընկնող տեղերում, ինչպես, որինակ՝
չրջանային դործադիր կոմիտեյի, քաղաքային, ավա-
նային և դյուղական խորհուրդների, կոլեկտիվ անտե-
սությունների, խրճիթ-ընթերցարանների և այլ հասո-
րակական կազմակերպությունների շենքերում:

13. Անհրաժեշտ է արդյոք պարտադիր վորոշում-
ների ընթերցումն ու բացատրումը

Անկախ հրապարակումից՝ պարտադիր վորոշում-
ներն անպայման կարդացվելու յեն դյուղական ժողով-
ներում, ըստ հնարավորության ամեն մի դյուղում,
կոլեկտիվ անտեսությունների ժողովներում և մանա-
վանդ այն աշխատակիցների մեջ, վորոնց վրա դրված
է պարտադիր վորոշումների կատարմանը հսկելու պար-
տականությունը:

Այդ ընթերցումների հետ միասին պետք է բացա-
տրել նաև պարտադիր վորոշում հրատարակելու նպա-
տակներն ու նրանցից բղխող պարտականությունները
14. Վո՞ր ժամանակից պարտադիր վորոշումը մտնում
է իր ուժի մեջ

Պարտադիր վորոշումը ուժի մեջ է մտնում հրա-
պարակելուց կամ փակցնելուց հետո 7 օրից վոչ ուշ,
յեթե միայն պարտադիր վորոշման մեջ չի նշված ավելի
ուշ ժամկետ:

Անհետաձգելի դեպքերում, ինչպես, որինակ՝ տար-
րերային աղետների դեմ պայքարելու, դորքեր տեղա-
վորելու անհրաժեշտության, պարտադիր վորոշումը

կարող է ուժի մեջ մտնել հրապարակելուց անմիջապես
հետո:

Յեթե պարտադիր վորոշումը փակցվում է, ապա
նրա վրա նշանակված պետք է լինի վակցման տարե-
թիվն ու ամսաթիվը:

Համենայն դեպս պարտադիր վորոշումը չի կարող
ներգործության մեջ դրվել ահաջ, քան նրա հայտա-
րարեն ի գիտություն բոլորի:

15. Սահմանափակվում է արդյոք պարտադիր վայո-
շումների ներգործության շրջանը

Պարտադիր վորոշումների ներգործությունը կա-
րող է տարածվել թե՛ համապատասխան վարչական ամ-
բողջ տերիտորիայի և թե՛ նրա վորոշ մասի վրա:

ՀԱՏՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ

ՎԱՐՁԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՆՄԱՆԱԿՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԸ

16. Ի՞նչ պատասխանատվություն կարող է նշանակվել
պարտադիր վորոշմամբ

Յեթե հարցը վերաբերում է քրեական որոնադրքի
համապատասխան հոդվածներով պատժելի դործողու-
թյուններին կամ չդործողություններին, ապա պար-
տադիր վորոշման մեջ պետք է նշանակված լինի դա-
տական պատասխանատվություն, իսկ մնացյալ դեպ-
քերում նշանակվում է պատասխանատվություն վարչ-
չական կարգով:

17. Ի՞նչ տեսակ միջոցներ են նշանակվում վարչական
կարգով

Պարտադիր վորոշման վորեն կետը խախտելու կամ
չկատարելու դեպքում կարող են վարչական կարգով
նշանակվել հետևյալ միջոցներից մեկն ու մեկը.

ա) նախադգուլացում.

բ) տուգանք.

գ) հարկադիր աշխատանքներ:

18. Ի՞նչ դեպքումն է կիրարկվում նախագգուշացումն նախադրուշացումը կերարկվում է վերահիշյալ հիմնարկների կողմից միմիայն աշխատավոր դատակարարին պատկանողների վերաբերմամբ, այն էլ նկատի ունենալով խախտման չնչին բնույթը, խախտողի անտեղյակ լինելը և այլն:

19. Ի՞նչ չափով և ի՞նչ սահմաններում կարող են նշանակվել վարչական միջոցները՝ պարտադիր վորոշումները խախտելու դեպքերում:

Պարտադիր վորոշումները խախտելու կամ չկատարելու համար վարչական կարգով նշանակված միջոցներն ունեն վորոշ չափ, վորը կայանում է հետևյալում.

ա) ժողովրդական կոմիտեների և նրանց հավասարեցված կենտրոնական հիմնարկների պարտադիր վորոշումներով կարող է նշանակվել տուգանք մինչև 100 ռուբլի, կամ հարկադիր աշխատանք մինչև մեկ ամիս ժամանակով:

բ) Շրջգործկոմիտեների, քաղաքային ու ավանային խորհուրդների պարտադիր վորոշումներով—տուգանք մինչև 50 ռուբլի, կամ պարտադիր աշխատանք մինչև 15 օր ժամանակով:

գ) գյուղխորհուրդների պարտադիր վորոշումներով—տուգանք մինչև 10 ռուբլի, կամ հարկադիր աշխատանք մինչև 5 օր ժամանակով:

Տուգանք նշանակելու վորոշման մեջ պետք է մատնանշված լինի, վոր այդ չվճարելու դեպքում բռնադանձվում է հարկադիր կարգով կամ փոխարինվում է վորոշ ժամանակամիջոցի հարկադիր աշխատանքով:

20. Ի՞նչ հանգամանքները պետք է նկատի առնել վարչական միջոցներ նշանակելիս

վարչական կարգով նշանակվող միջոցների տեսակներն ու չափերը վորոշելիս պետք է նկատի առն-

վեն խախտողի դատակարգային պատկանելիությունը, նյութական դրուժյունն ու դիտակցության աստիճանը, նաև կատարված խախտման բնույթը:

21. Ի՞նչ դեպքում տուգանքը կարող է փոխարինվել հարկադիր աշխատանքով և ընդհակառակն

Տուգանքը փոխարինվում է հարկադիր աշխատանքով, յերբ այդ չի վճարվում, բայց այս միջոցը կիրառվելու չէ աշխատավոր տարրերի նկատմամբ:

Հարկադիր աշխատանքները փոխարինվում են տուգանքով, յերբ խախտողը ճանաչվում է անաշխատունակ:

22. Ի՞նչպես են նշանակվում վարչական կարգի միջոցները՝ պետական հիմնարկաւթյունների, ձեռնարկաւթյունների, կազմակերպաւթյունների և այլոց, (իրավական անձերի) վերաբերմամբ

Յեթե պարտադիր վորոշումների խախտման համար վարչական կարգի միջոցները նշանակված են պետական հիմնարկների, ձեռնարկաւթյունների ու հասարակական կազմակերպությունների վրա, ապա այդ միջոցները պետք է կիրառվեն այն պաշտոնատար անձերի վերաբերմամբ, վորոնք իրենց պաշտոնական պարտականությունների կարգով պատասխանատու յեն, վոր ժամանակին միջոցներ չեն ձեռնարկել պարտադիր վորոշումները կատարելու:

23. Ո՞ր վրա յեն դրված պարտադիր վորոշումները կատարելու հսկողաւթյունը և վարչական մերգործաւթյան միջոցները կիրառելու պարտականաւթյունները

Պարտադիր վորոշումների կատարման հսկողությունն ու վարչական նրեգործության միջոցների կիրա-

ռումը, այդ վորոշումների խախտման դեպքում, ղըր-
վում է գլխավորապես բանվորադուղադիական միլի-
ցիայի մարմինների վրա:

Որինակ՝ քաղխորհուրդների և շրջգործկոմների
պարտադիր վորոշումները խախտելու դեպքում վարչա-
կան ներգործության միջոցներ կիրառելու իրավունքն
ամբողջութեամբ պատկանում է միլիցիայի համապա-
տասխան վարչութիւններին:

24. Իրավունք ունի՞ արդոյ գյուղխորհուրդը վերա-
դաս մարմինների կողմից հրատարակված և սվյալ
գյուղխորհրդի տեքիտքիւայի վրա գործող պարտադիր
վորոշումները խախտելու դեպքում կիրառել վարչական
միջոցներ

Այո. բայց վարչական ներգործության միջոցները
չեն կարող ավելի լինել, քան այդ նախատեսված է
պարտադիր վորոշումներ հրատարակելու կարգի վերա-
բերյալ կանոնադրութեամբ (տես հարց 19, կես «գ»):

25. Ի՞նչպես պետք է վարվի գյուղխորհուրդը, յեթե
նա անբավական է գտնում իրեն վերապահված վարչա-
կան ներգործման միջոցների կիրարկումը՝ վերադաս
մարմինների հրատարակած պարտադիր վորոշումները
խախտողների նկատմամբ

Այս դեպքում գյուղխորհուրդը ամբողջ գործն ու-
ղարկում է համապատասխան Շրջգործկոմին՝ ավելի
բարձր վարչական միջոց նշանակելու համար:

26. Ո՞վ է հսկում պարտադիր վորոշումների ու-
րինակացումը

Պարտադիր վորոշումները որինականութեանը հըս-
կում է համապատասխան վարչական շրջանի դատա-
խաղը, վորը, յերբ դանում է, թի հրատարակված պար-
տադիր վորոշումն ապօրինի յե, անմիջապես բողոքա-
ր

կում է ալդարխին հրատարակող հիմնարկին՝ վերանա-
յելու:

27. Դատախաղի բողոքը կանցցում է արդոյ
պարտադիր վորոշման ներգործութեանը

Մինչև դատախաղի բողոքի քննութիւնը պարտա-
դիր վորոշման ներգործութիւնը չի կանցցվում:

28. Յե՞րբ և ո՞ւր են ուղարկվում հրատարակված պար-
տադիր վորոշումների պատկերները

Շրջգործկոմների ու քաղխորհուրդների հրատա-
րակած պարտադիր վորոշումները, ստորագրելուց հե-
տո, յերեք ուրվա ընթացքում, ուղարկվում են համա-
պատասխան շրջանի դատախաղին և ՀՍԽՀ Կենտրոնա-
կան Գործադիր Կոմիտեյի Կազմարժնին նաև Ժողկոմ-
խորհի ու տնտեսական խորհրդակցութեան գործերի
կառավարչութեանը:

Իսկ Ժողովրդական կոմիտեիատների ու նրանց
հավասարեցված կենտրոնական հիմնարկների հրատա-
րակած պարտադիր վորոշումները նույնպես յերեք ուր-
վա ընթացքում, ստորագրելուց հետո, ուղարկվում են
հանրապետութեան դատախաղին և Ժողկոմխորհի ու
Տնտխորհի գործերի կառավարչութեանը:

29. Ի՞նչպես պետք է վարվել պարտադիր վորո-
շումների խախտման դեպքում

Յերբ նկատվի պարտադիր վորոշման խախտում,
անհապաղ պետք է կազմել ամեն մի առանձին դեպ-
քում պատշաճ արձանագրութիւն:

30. Ովքե՞ր են կազմում այդ արձանագրութեանը

Պարտադիր վորոշումները խախտելու կամ չկատա-
րելու մասին արձանագրութեանը կազմում:

ա) Բ. Գ. Միլիցիայի միջոցաւ:

բ) գյուղխորհուրդի անդամները:



դ) գյուղական կատարածուները .

դ) այն պաշտոնատար անձները, վորոնց վերապահ-ված է այդ իրավունքը հատուկ որենքներով . նմանապես պարտադիր վորոշումների համաձայն՝ սանիտարական, տեխնիկական, առևտրական տեսչություններին, հրդեհային հսկողություն, աշխատանքի տեսչության, անտառային պահակության և այլ պաշտոնյաները, յեթե պարտադիր վորոշումը խախտելուց անցել է մեկ ամսից վոչ ավելի ժամանակ և յեթե դատարանը չի սկսել տվյալ պարտադիր վորոշումը խախտելու մասին գործի քննությունը :

31. Ի՞նչ պետք է նշված լինի արձանագրութան մեջ .

Արձանագրության մեջ պետք է նշված լինի .

ա) յե՞րբ և ո՞վ է կազմել արձանագրությունը .

բ) խախտողի անունը, հայրանունն ու ազգանունը, տարիքը, սոցիալական դրությունն ու բնակության վայրը .

գ) յե՞րբ, վո՞րտեղ և ինչո՞վ է արտահայտվել խախտումը, մանրամասն նկարագրելու խախտման բոլոր հանգամանքներն ու խախտման կետերը .

դ) պատասխանատվության յենթարկվողի բացատրությունները

ե) արձանագրություն կազմողի և պատասխանատվության յենթարկվողի ստորագրությունը, նաև վկաների ստորագրություններն, յեթե այդպիսիները կան :

Յեթե պատասխանատվության յենթարկվող պարտադիր վորոշում խախտողը հրաժարվում է արձանագրությունը ստորագրելուց, այդ մասին պետք է նշել արձանագրության մեջ, հիշելով հրաժարման շարժառիթները (Տես կցվող արձանագրության ձևը) :

32. Ո՞ր եմ ներկայացվում այդ արձանագրությունները

Պարտադիր վորոշումները խախտելու վերաբերյալ արձանագրությունը ներկայացվում է ըստ պատկանելության այն մարմնին, վորին պարտադիր վորոշման համաձայն, վերապահված է վարչական ներդրոծության միջոցների կիրառման իրավունքը (ժողովրդական կոմիտեներ, Միլիցիայի վարչություններ, ավանային և գյուղական խորհուրդներ) :

Պարտադիր վորոշումները ղինվորականների կողմից խախտվելու դեպքերում արձանագրությունն ուղարկվում է համապատասխան զորամասի պետին, իսկ այդ վորոշումները փոքրահասակների ու մինչև 16 տարեկան անչափահասների կողմից խախտվելու դեպքում արձանագրությունը ներկայացվում է անչափահասների դործերը քննող հանձնաժողովին :

33. Ի՞նչ միջոցներ եմ ձեռնարկում այն մարմինները, վորմե ստանում եմ պարտադիր վորոշումը խախտելու վերաբերյալ արձանագրությունը

Այդ մարմինները յերեք որվա ընթացքում լուծում են վարչական կարգով պատիժ նշանակելու հարցը կամ վորոշում են կայացնում գործն իսպառ դադարեցնելու մասին և կամ գործն ուղարկում են դատական կարգով քննելու, յեթե տվյալ պարտադիր վորոշումը խախտելու դեպքում նախադեպում է դատական պատասխանատվություն : Յեթե այդ մարմինն անհրաժեշտ գտնի պարզարանել լրացուցիչ հանգամանքներ, ապա իրավունք ունի կանչել խախտողին՝ նրա բացատրությունները լսելու համար կամ վերադարձնել գործը լրացուցիչ տեղեկություններ հավաքելու և ներկայացնելու համար : Խախտողի ներկայանալը չի կարող ընդհատել

գործի քննութիւնը: Սխառտողի հարկադիր բերումը միլիցիայի ձեռքով չի թույլատրւում:

Զինվորականների վերաբերմամբ համապատասխան զորամասի պետը, կարմիր բանակի կարգապահական կանոնադրութեան համաձայն, ձեռնարկում է սահմանված միջոցները, հաղորդելով այդ մասին ի տեղեկութիւն այն մարմնի, վորը ներկայացրել է իրեն խախտման վերաբերյալ արձանագրութիւնը:

Անչափահասների նկատմամբ, փոքրահասակների դործերը քննող հանձնաժողովը ձեռնարկում է դատաւարակչական ներդրութեան միջոցներ, վորի մասին տեղեկացնում է խախտման արձանագրութիւնը ներկայացնող մարմնին:

34. Ի՞նչ դեպքում չի կարելի կիրառել վարչական ներգրծութեան միջոցներ՝ պարտադիր վորոշումները խախտելու համար

Վարչական կարգով վորոշված միջոցը չի կարող կիրառվել այն պարտադիր վորոշումների խախտման համար, վորոնք սովյալ գործի քննութեան վայրկյանին փոխվել են, կամ վերացվել են և կամ կորցրել են իրենց ուժը ներգրծութեան սահմանած ժամկետն անցնելու հետեանքով:

35. Ի՞նչ ցուցմունքներ են պարունակելու վարչական միջոցներ նշանակելու մասին վորոշումները

Վարչական կարգով միջոցներ նշանակելու վերաբերյալ վորոշումները պարունակելու յեն հետեյալ կետերը.

ա) վորոշումն կայացնելու տարեթիւնն ու ամսաթիւը.

բ) խախտողի ազգանունը, անունն ու հայրանունը,

տարեկը, սոցիալական և դուքային դրութիւնն ու բնակավայրը.

գ) պարտադիր վորոշման խախտված կետերը.

դ) վարչական կարգով նշանակված պատժական միջոցի տեսակն ու չափը:

36. Ի՞նչ ժամկետ է նշանակված պարտադիր վորոշումները խախտելուն վերաբերյալ վորոշումը կատարածելու համար

Պարտադիր վորոշումները խախտելու համար վարչական կարգով նշանակված միջոցների վերաբերյալ վորոշումը պետք է անմիջապէս հաղորդվի կատարածու մարմիններին և այդ մասին յերեք ուրվա ընթացքում տեղեկացնելու յե խախտողին:

Յեթե վարչական կարգով նշանակված միջոցների մասին վորոշումը, կայացնելու որից յերկու ամսվա ընթացքում, չի կատարված, սպա նա կորցնում է իր ուժը, և դործը յենթակա յե կարճման:

37. Կարելի՞ յե արդյոք իջեցնել, փոխարինել կամ վերացնել վարչական կարգով նշանակված միջոցները

Յերբ վարչական միջոցը կատարծելիս պարզվում է, վոր նշանակված վարչական միջոցի չափն ու տեսակն անհամապատասխան է սովյալ անձի դուքային, դատաւարդային ու ընտանեկան դրութեանը, սպա կարելի յե ներգրծութեան մեկ միջոցը փոխարինել մի այլ միջոցով, չձանրացնելով, այլ նմանեցնելով այդ չափը, կամ հետաձգել կատարումը և կամ բոլորովին վերացնել:

38. Ո՞ւմ է պատկանում վարչական կարգով նշանակված միջոցի վերացման, փոփոխման ու իջեցման իրավունքը

վարչական միջոցը վերացնելու, փոխելու կամ իջեցնելու իրավունքը պատկանում է նույն այն մարմնին, վորն այդ միջոցն ի կատար է ածում:

39. Ովքե՞ր են ի կատար ածում վարչական կարգով նշանակված միջոցների վերաբերյալ վորև-

շումները

Պարտադիր վորոշումները խախտելու համար վարչական միջոցներ նշանակելու մասին վորոշումներն ի կատար են ածում:—

ա) միլիցիայի աշխատակիցները.

բ) գյուղական կատարածուները.

գ) պաշտոնատար այլ անձեր, վորոնց վրա այդ պարտականությունը դրված է որեւէով կամ պարտադիր վորոշումով:

40. Թույլատրվում է արդյո՞ք տուգանքն անմիջապես գանձել պարտադիր վորոշումը խախտելու վարկյանին

Փողոցների յերթիվեկության շարժումն և հասարակական վայրերում կարգը (ծխելը, կեղտոտելը, ավտոմոբիլները և այլ կառքերի շարժումը կանոնավորելու նպատակով հրատարակվող պարտադիր վորոշումները խախտելու համար, Յերեսանում ու Լենինականում թույլատրվում է վարչական կարգով տուգանք նշանակել 5 ուրբուց վեջ ավելի՝ անմիջապես խախտման վայրկյանին ու խախտման վայրում:

Այդ տուգանքի դանձումը կատարում են միլիցիայի աշխատակիցները կամ այն պաշտոնատար անձերը, վորոնք անմիջապես հսկում են հիշյալ պարտադիր վորոշման կատարմանը:

41. Կազմում են արդյո՞ք արձանագրություն՝ պարտադիր վորոշումը խախտելու վայրկյանին տու-

գանձ բռնագանձելու

Այդ տուգանքը դանձելու ժամանակ արձանագրություն չեն կազմում այլ խախտողին տրվում է մեղադրագիր՝ դումարի ստացման մասին:

42. Ի՞նչպես վարվել, յեթե վերոհիշյալ դեպքում խախտողը մերժում է տուգանք վնարելը

Պարտադիր վորոշումը խախտելու տեղում հարգելի պատճառով (դրամ չունենալը և այլն) տուգանք չվճարող անձը ստորագրում է անդորրագրի գրքույկում, նշանակելով իր հասցեն և պարտավորվելով մեծել տուգանքի դումարը 3 օրվա ընթացքում միլիցիայի համապատասխան բաժնում:

Յեթե խախտողն հրաժարվում է առանց հարգելի պատճառի տուգանքը վճարել կամ անդորրագրի գրքույկում ստորագրել և իր հասցեն հայտնել կամ յեթե կասկած է ծագում նրա անձնավորության ու հասցեյի վերաբերյալ տեղեկությունների ճշտության մասին, ապա խախտողը տարվում է միլիցիայի համապատասխան բաժինը, ուր և ընդհանուր կարգով կազմվում է պարտադիր վորոշումը խախտելու մասին արձանագրություն: Այս դեպքում տուգանքի չափը կարելի չէ կրկնապատկել, յեթե այդ հնարավորությունը նախատեսված է պարտադիր վորոշումով: Սակայն խախտողի մոտ կանխիկ դրամ չլինելու հանգամանքը չի կարող տուգանքն ավելացնելու հիմք ծառայել:

ՀԱՏՎԱԾ ՅԵՐԻՐՈՐԴ

ՎԱՐՁԱԿԱՆ ՄԵՋՈՑ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔ ՏԱԼՈՒ
ԿԱՐԳԸ

43. Կարելի՞ չէ արդյո՞ք վարչական միջոց նշանակելու վորոշման դեմ բողոք հարուցել

Յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի վարչա-

կան միջոց նշանակելու վորոշումն իրեն հայտնելու պահին հինգ որով ընթացքում բողոք ներկայացնել նրա դեմ կամ միջնորդել այդ վերանայելու մասին :

Իսկ պարտադիր վորոշումը խախտելու վայրում միլիցիայի աշխատակիցներին կողմից նշանակված տուգանքի դեմ կարող ե բողոք ներկայացնել 3 որով ընթացքում :

44. Ո՞ւր ե ներկայացվում այդ բողոքը

Վարչական միջոց նշանակելու վորոշման դեմ բողոքը ներկայացվում ե—

ա) Ժողովրդական կոմիտեների ու նրանց հավասարադր կենտրոնական հիմնարկների վորոշման դեմ— Ժողովրդական Կոմիտեների Խորհուրդին .

բ) Միլիցիայի վարչությունների վորոշման դեմ— համապատասխան քաղաքահարկների ու շրջագործկոմիտեների նախագահություններին .

գ) Ավանային և դուղական խորհուրդների վորոշման դեմ— համապատասխան շրջագործկոմիտեների նախագահություններին .

դ) Հսկողություն կարգով— համապատասխան շրջանի դատախազին :

45. Բողոքը կասեցնում ե արդյոք վարչական միջոցի կատարումը

Յեթն բողոքը ներկայացված ե դատախազական հսկողության մարմիններին, ապա վարչական միջոց նշանակելու վորոշման կատարումը կասեցնում ե, մինչև վոր բողոքը քննության առնվի : Մնացյալ դեպքերում այդ վորոշումը ի կատար ե ածվում, անկախ ներկայացված բողոքից :

ՀԱՅԳԱԾ ԶՈՐՐՈՐԴ

ՎԱՐՁԱԿԱՆ ՄԻՋՈՑԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾՄԱՆ ՄԱՍԻՆ

46. Ուր ե մուծվում նշանակված տուգանքը

Տուգողը մուծում ե նշանակված տուգանքի գումարը պետական բանկի բաժանմունքը, կամ Քաղխորհրդին, շրջագործկոմին, գյուղխորհրդի գանձարկղը, ըստ խախտման վայրի կամ իր բնակավայրի, 5 որով ընթացքում վարչական միջոց նշանակելու մասին իրեն հայտնելու պահից :

47. Ի՞նչպես վարվել, յերբ խախտողը չի մուծում տուգանքը նշանակված ժամկետին

Նշանակված ժամկետին չմուծված տուգանքի գումարը համարվում ե ապառիկ, վորը բռնագանձվում ե հարկադիր կարգով, համաձայն «Հարկերի գանձման մասին կանոնադրության» և համաձայն այն դույքերի ցանկի, վորոնց վրա չի կարող տարածվել բռնագանձումը : Ներկա դեպքում պետք ե դեկավարվել «Հարկերի գանձման մասին կանոնադրության» 17, 18 և 21-րդ հոդվածներով (ԽՍՀՄ «Որենքների և Կարգադրությունների ժողովածու», 1925 թ. № 70, հոդ. 517 և 1929 թ. № 71 հոդ. 672) :

48. Ինչ ե ասում «Խարկերի գանձման մասին կանոնադրության» վերոհիշյալ 17-րդ հոդվածը

«17. Բռնագանձումը չի կարող տարածվել . ա) այն գումարների վրա, վորոնք անհրաժեշտ են անցած ժամանակի համար առաջին կարգի պահանջանքները բավարարելու համար, իսկ պարբերական վճարումների առաջին կարգի պահանջանքների նկատմամբ նաեւ յերկու չաբաթ առաջ բավարարելու համար, իսկ դրա համար

բավականաչափ կանխիկ գումարներ չլինելու դեպքում համապատասխան չափով նաև յերրորդ անձերից հասանելի կամ թե վարկային հիմնարկություններում ընթացիկ հաշիվներին կամ իբրև ավանդ գտնվող գումարները վրա, բ) ամեն տեսակի ու աստիճանի կոոպերատիվ կազմակերպություններին, փոխադարձ և դուրդատնտեսական վարկի ընկերություններին, աշխատանքային արտոնների անդամների փայտավճարների վրա, ինչպես նաև պատասխանատու աշխատանքի արտոնների անդամների փայերի վրա, գ) պարտադիր կոոպերային և վոչ կոոպերային ապահովագրությունից ապառիկ ունեցողին հասանելի գումարներին վրա, դ) գործող օրենսդրություն համաձայն, այն մարմինների կողմից ուտարման ու գրավագրություն վոչ յենթակա պետական գույքի վրա, վորի տնորինությունները յի գտնվում այդ գույքը, ե) Յ ամսվա ընթացքում ձեռնարկությունների փաստացի աշխատանքի համար անհրաժեշտ հումույթի և վառելիքի վրա, զ) պետական հիմնարկությունների ու ձեռնարկություններին չինություններին վրա, է) արտադրական միջոցներին ու գործիքներին վրա, վորոնք անհրաժեշտ են ապառիկ ունեցողներին այն կատեգորիաներին արհեստների ու տնայնագործական զբաղմունքներին համար, վորոնք հարկվում են արհեստահարկի կալուն կոպարներով, նույնպես և արտադրություն այն միջոցներին, գործիքներին, պիտույքներին և գրքերին մրա, վորոնք անհրաժեշտ են ապառիկ ունեցողներին անձնական արհեստակցական զբաղմունքներին համար, ը) ապառիկ ունեցողի և նրա հաշիվով պահվող անձանց համար անհրաժեշտ են հազնելու ձմեռվա և ամառվա չորերին, սպիտակեղենի, կոշիկների և տնային արքուտարքի ուրիշ անհրաժեշտ առարկաներին վրա, թ) վառելիքի և

պարենավորման միջերքերի պաշարի վրա, վորն անհրաժեշտ են ապառիկ ունեցողի ընտանիքի անդամներին ու նրա հաշիվին և նրա հետ միասին ապրող անձանց յերեք ամիս ապրելու համար, ժ) միասնական դուրդատնտեսական հարկ վճարողների պարենավորման միջերքերի վրա այն քանակությամբ, վոր անհրաժեշտ են մինչև վ նոր բերքը, ի) դուրդատնտեսական կենդանի և անկենդան ինվենտարի վրա, ամեն տնտեսություն համար հաշիվելով հետևյալ քանակով՝ 1. մի արոր, 2. Մի գուլթան, 3. Մի տախան, 4. Մի կով, 5. Մի ձի, (իսկ յերաչտոտ ռայոններում յերկու ձի) կամ մի ուղտ, կամ ջորի, կամ թե մի գույգ յեղ, կամ համապատասխան քանակով այլ տեսակի լծկաններ, անասունների կերի վրա՝ այն քանակությամբ, վորն անհրաժեշտ են մինչև նոր կեր հավաքելը, լ) բուղաների վրա յեթե նրանք սպասարկում են հասարակական նախիրը, և նախորդ կետում նշված ժամանակամիջոցում յուրաքանչյուր զլխին անհրաժեշտ քանակի կերի վրա, ինչպես նաև մինչև վ Յ տարեկան բանվոր ջահել անասունի և մինչև մեկ ու կես տարեկան հորթերի վրա, յուրաքանչյուր տնտեսությունը մեկ զլխից վոչ ավելի չափով լի) դուրդական տնտեսություն անբաժան պատկանելիքը կազմող բնակելի և տնտեսական շինություններին վրա, ծ) չհավաքած բերքի վրա, բացի աշխատավորական կոմունաներին և կոոպերատիվ կազմակերպություններին չպատկանող արդյունաբերական ալիքներին և բանջարանոցների բերքից, կ) ապառիկ ունեցողի կողմից ընթացիկ դուրդատնտեսական տարում մշակվող հողամասը ցանելու համար անհրաժեշտ քանակությամբ յեղած սերմացուի, վրա, իսկ անասնաբուծական տնտեսություններում-

տնտեսությունը պահելու համար անհրաժեշտ անասունի քանակության վրա :

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այս հոդվածի «թ» «ժ» «ի» «լ» «խ» և «կ» կետերը չեն տարածվում կուլակային տնտեսությունների, ինչպես նաև այն անձանց վրա, վորոնք յեկամտային հաբկի յեն յեն-թարկվում ը 3 ցուցակի համաձայն :

49. Ի՞նչ է ասում նույն կոնոնադրության 18-րդ հոդվածը

«Նախընթաց (17-րդ) հոդվածի կիրարկության կարգը, համապատասխան դեպքում մանրամասն մատնանշումով այդ հոդվածում թվարկած դույրի տեսակների թվի մասին, այն դույրի, վորը տուգանքի տակ չի կարող դրվել, սահմանվում է դաշնակից հանրապետությունների որենսդրության միջոցով» :

Այստեղ նշվելու յե, վոր տվյալ դեպքում խորհրդային Հայաստանում տակավին դոյություն չունի այդպիսի հատուկ որենսդրական ակտ, ուստի բռնադանձումների ժամանակ ղեկավարվում են «Բաղաքացիական Դատավարական Որենսդրքի» 271-րդ հոդվածով :

Այդ 271-րդ հոդված նասում է. «271. Գանձումը դույրի վրա յե դարձվում պարտապանի դույրը արգելքի տակ դնելու, ցուցակադրելու, կնքելու և վաճառելու միջոցով, բացի՝

ա) պետական այն դույրից, վորը գործող որենսդրության համաձայն չի կարող ոտարվել կամ գրավ դրվել այն մարմինների կողմից, վորոնց տնորինության տակ է գտնվում :

բ) պետական հիմնարկությունների ու ձեռնարկությունների շինքերից, այլև այն դույրից, վոր մտնում

է պետական ձեռնարկությունների հիմնական դրամագլխի կազմի մեջ :

գ) պարտապանի կողմից բոլոր տեսակի ու աստիճանի կոոպերատիվ կազմակերպությունները, փոխադարձ և գյուղատնտեսական վարկի ընկերությունները, աշխատավորական և պատասխանատու աշխատանքի արտելները մուծված փայավճարներից :

դ) պարտապանի մոտ յեղած կանխիկ, յերրորդ անձերից ստանալիք կամ ընթացիկ հաշվով և վորպես ապվանդ վարկային հիմնարկություններում դանվող այն այն գումարներից, վորոնք անհրաժեշտորեն բանվորների ու ծառայողների անցած ժամանակի և առաջիկա 14 որվա աշխատավարձը վճարելու, ինչպես նաև նույն ժամանակի համար հասանելի սոցիալական ապահովագրության տուրքերը մուծելու և ապրուստի միջոց (ալիմենտ) հատուցանելու համար :

է) պարտապանի և նրա խնամքի տակ գտնվող՝ ընտանիքի անդամների արտադրության, արհեստի, տնայնադործության և անձնական զբաղմունքի համար անհրաժեշտ գործիքներից, ձեռնարկներից և գրքերից, ինչպես նև վորսորդության, ձկնորսության և այլ զբաղմունքների համար անհրաժեշտ գործիքներից այն տնտեսություններում, վորտեղ այդ զբաղմունքները հանդիսանում են յեկամտի հիմնական աղբյուրներ :

զ) ձեռնարկության փաստական աշխատանքի համար անհրաժեշտ յերեք ամսվա հում նյութերից ու վառելիքից, այլև արհեստակցական կազմակերպություններին պատկանող գործադուլային և կուլտուրլուսավորական ֆոնդերից, ինչպես նաև միության գործադուրկ անդամներին նպաստ տալու համար կազմված

Ֆոնդերից և կազմակերպութեան նորմալ ու անարդեւ աշխատանքի համար անհրաժեշտ շենքերից ու կառուց-վածքներից :

ը) գյուղատնտեսական անհրաժեշտ գործիքներից , ինչպես նաեւ մի կովից , մի ձիուց կամ նրանց փոխա-րինող այլ տեսակի անասունից , կամ մի գուրգ յեղից և այն քանակութեանից , վորն անհրաժեշտ ե մինչև անա-սուններին արոտ հանելը , սակայն վոչ ավելի քան վեց ամսվա համար .

թ) պարտապանի մշակած հողն առաջիկայում ցանելու համար անհրաժեշտ սերմացուից .

ժ) գյուղատնտեսութեան անկապտելի պատկանելի-քը կազմող բնակելի և տնտեսական շենքերից , ինչպես նաեւ կառուցվածքների համար հատկացված և պետա-կան մարմիններից ձրիաբար կամ արտոնյալ պայմանե-րով ստացված փայտեղենից .

ի) չհավաքած բերքից , բացի աշխատավորական կո-մունաներին և կոոպերատիւ կազմակերպութեաններին չպատկանող արդէյունաբերական այգիների , պարտեզ-ների ու բանջարանոցների , պտղանոցների և ծխախոտի ցանքերի բերքից .

լ) պարտապանի սոցիալական ապահովութեան կարգով տրվող կամ փոխադարձ ոգնութեան գյուղա-ցիական ընկերութեաններին կողմից նպաստների ու փո-խատուութեան կարգով տրվող գումարներից , ինչպես նաեւ գյուղատնտեսական վարկի հիմնարկութեաններին սակավագոր գյուղացիական տնտեսութեաններին ար-տադրական նպատակներով տրվող փոխատուութեան-ների գումրից , կամ այն գումարներից , վորոնք տըր-վում են արհեստագործական և աշխատավորական ար-տեւների անդամներին՝ նպաստի կամ փոխատուութեան

կարգով՝ փոխոգնութեան Ֆոնդերից , կամ արհեստա-գործական կոոպերացիայի փոխադարձ ոգնութեան դրա մարկդներից .

խ) պարտապանի կամ նրա ծախքով ապրող ան-ձանց անհրաժեշտ հագուստից , սպիտակեղենից , վոտ-նամաններից և տնային գործածութեան առարկաներից .

ծ) պարտապանի ընտանիքի անդամներին և նրա հետ միասին ու նրա ծախքով ապրողների համար անհրա-ժեշտ վառելիքից ու պարենից մինչև վեց ամիս ժամա-նակի հաշվով .

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1. Ապահովագրիներին նը-րանց կրած վնասների համը պարտագիր կոպարա-յին և վոչ-կոպարային ապահովագրութեան կար-գով հասանելի ապահովագրական գումարների վրա չի կարելի դարձնել ապահովագրի՝ պետական մար-միններին և մասնավոր անձանց տալիք ամեն տե-սակ պարտքերի դանձումը , յեթե այդ գումրիները գործադրվելու յեն բացառապես վոչնչացած գույքը վերականգնելու համար , բացի շխատավարձի , սո-ցիալական ապահովագրութեան , ինչպես նաեւ ապա-հովագրված գույքի գրավագրութեամբ ապահովված վաճարկային հիմնարկութեաններին պահանջներից :

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—2. Այս հոդվածի «ը» և «ժ» կետերով նախատեսված բացառութեանները չեն տարածվում այդ կետերում հիշված առարկաների վրա , յեթե այդ առարկաները ստացված են վար-կային և փոխատու-ինացողական ընկերութեաննե-րից , այլև վարկային ֆոնդիցիաներ ունեցող գյու-ղատնտեսական ընկերութեաններից և գրավ են դրված համապատասխան ընկերութեան մեջ՝ տըր-

ված փոխադրութեան պարտաճանաչ վճարումը ապահովելու համար :

ՀՍԽՀ Կենսագործկոմի 1928 թ. հուլիսի 7-ի վորչման խմբագրութեամբ) :

Ծանոթութիւն 3. — Պետական հիմնարկութիւններից ու ձեռնարկութիւններից, կոոպերատիվ, արհեստակցական և հասարակական կոոպերատիվներից վատնած, հափշտակած կամ յուրացրած դուլքի հատուցման կարգով քրեական կամ քաղաքացիական դատարանի կողմից վճրուած դումարների դանձման կարգը սահմանուում է ԽՍՀՄ Կենսագործկոմի և Ժողկոմխորհի 1927 թ. ոգոստոսի 10-ի վորոշմամբ (հաւելված 2), ինչպես նաև ՀՍԽՀ Ժողկոմխորհի կողմից հրատարակվելիք հատուկ վորոշմամբ :

271-ա. Հեղինակի իրավունքի վրա հեղինակի պարտաւորոջ կողմից չի կարող դանձում դարձվել :

Գանձումը կարելի չէ դարձնել այն յեկամուանների վրա, վոր հեղինակը ստանում է իր իրավունքից :

(1928 թ. նոյեմբերի 5-ին, № 14, հոդ. 154) :

271-բ. Պետական խնայողական դանձարկղները, ինչպես նաև սպորտդական և դուրաւանանական ու արհեստագործական ընկերութիւնները մուծած ավանդների վրա դանձում դարձնել և արգելք դնել կարելի չէ միայն դատական և դատարանական մարմինների քրեական գործերի վերաբերյալ վորոշումների հիման վրա :

Մասնանշված ընկերութիւններում պահվող ավանդների վրա, բացի շրտանից, թույլ է տրվում դանձում դարձնել և արգելք դնել նաև այդ ավանդներն ըն-

դունած կազմակերպութիւնների ուսին կատարվող գանձումների վերաբերյալ գործերով :

(1930 թ. մայիսի 3-ին, № 5, հոդ. 101) :

271-գ. Վարկային հիմնարկների կողմից ընդունված չեկի դումարի վրա չի կարող չեկատուի դեմ հարուցված պահանջների թաւարարման կարգով արգելք դրվել կամ դանձում դարձվել մինչև չեկի ներդրութեան ժամանակամիջոցի լրանալը :

1930 թ. մայիսի 3-ի № 113, հոդ. 6) » :

50. Ինչ է աւում «հարկերի գանձման մասին կանոնադրութեան» 21-րդ հոդվածը

«Վարկային հիմնարկութիւններում և խնայողական դանձարկղներում յեղած ամեն տեսակի ավանդները տուգաքի տակ դնելը, նույնպես և այդ ավանդների մասին այս կամ այն տեղեկութիւններ տալը սահմանվում է հատուկ կարգով, վոր սահմանված է այդ մասին հիմնարկութիւնների որենքների ու կանոնադրութիւնների միջոցով, նույնպես և հատուկ որենքների միջոցով » :

51. Կարելի՞ չէ արդյոք տուգանքի բուագանձումը տալածել բանվորների ու ծառայողների աշխատավարձի վրա

Տուգանքի դումարը չի կարելի բուագանձել բանվորների ու ծառայողների աշխատավարձից :

52. Ո՞ւր են ուղարկվում պարտաւոր վորոշումների խախտման հետեւանում հարկաւոր աշխատանքների նշանակված անձները

Այն անձերը, վորոք պարտաւոր վորոշումները խախտելու հետեւանում յեկարկվում են վարչական կարգով հարկաւոր աշխատանքների, ուղարկվում են հարկաւոր աշխատանքների բյուրոյի կամ նրա բաժան-

մունքի տրամադրութեան տակ, իսկ վորտեղ այդպիսիք չկան, — համապատասխան ֆաղխորհրդի, շրջագործկոմի կամ գյուղխորհրդի տրամադրութեան տակ՝ այդ աշխատանքները կատարելու համար:

53. վո՞րտեղ են կատարում պարտադիր վորոշումներ խախտողներն իրենց հարկադիր աշխատանքները Հարկադիր աշխատանքներն, իբրև ընդհանուր կանոն, կատարվում են այդ միջոցը կրող անձի բնակավայրում. բացառիկ դեպքերում այդ աշխատանքները կատարվում են և այլ վայրերում, բայց խախտողի բնակավայրից վոչ ավելի քան 10 կիլոմետր հեռավորութեան վրա:

54. Ինչպես են կիրարկվում հարկադիր աշխատանքները աշխատավարձի գյուղացիների նկատմամբ

Կիրարկվում են ընդհանուր հիմունքներով, միայն չի թույլատրվում նրանց նկատմամբ հարկադիր աշխատանքները նշանակել դաշտային աշխատանքների ժամանակ:

55. Ինչո՞վ են դեկավարվում պարտադիր վորոշումները խախտողների նկատմամբ հարկադիր աշխատանքները կիրառելիս

Հարկադիր աշխատանքները կիրարկելիս՝ պարտադիր վորոշումների խախտողների վրա տարածվում են ԽՍՀՄ Ուղղիչ-Նշխատանքային Որենսդրքի 4-րդ գլխի բոլոր հոդվածները, բացառութեամբ 37, 38 և 39-րդ հոդվածների (ՀՍՄՈՒՆ Որ. և Կարգ. Ժող. 1927 թ. № 4. հոդ. 32):

56. Ինչպե՞ս վարվել, յերբ պարտադիր վորոշումների խախտողը փախել է իր բնակավայրը.

Յեթե պարտադիր վորոշումների խախտողը փոխել է յուր բնակավայրը, ապա վարչական միջոց նշանակե-

լու ամբողջ վար. Եթե պետք է ուղարկվի համապատասխան մարմնին այն կատար ածելու, ըստ խախտողի նոր բնակավայրի:

57. Կարո՞ղ են արդյո՞ք. Գ. Միլիցիայի մարմինները կատարել գյուղխորհուրդի նշանակած տուգանքների հարկադիր բացանձուրք

Գյուղխորհրդի սահմանում գործող պարտադիր վորոշումների խախտման հետևանքով այդ գյուղխորհրդի վորոշմամբ նշանակված բողոքանքի հարկադիր բռնագանձումը կատարելու յեն վիճ թե ԲԳ Միլիցիայի աշխատակիցները, այլ գյուղական կատարածուները.

58. Յենք-ակա՞ յեն արդյո՞ք պատասխանատվութեան այն անձերը, վորոնք նշանակել են անկանոն վարչական միջոցներ

Անհայտ սխալ ու անկանոն վարչական միջոցները վոչ միայն վերացվում են, այլև վորոշ դեպքում այդպիսի վարչական միջոցներ նշանակողները յենթարկվում են քրեական պատասխանատվութեան:



2328



ՀՀ Ազգային գրադարան



NL0213417

39.380